ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 ապրիլի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

53
(2719)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Ւ ԵՆ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԸ

Եվրոպական կողմը դեռ չի շտապում մեկնաբանել երեկ Ադրբեջանի հերթական սադրանքը: Բանն այն է, որ ադրբեջանական զինուժն երեկ՝ կեսօրից հետո, կրակ է բացել Տեղ գյուղի հատվածում ինժեներական աշխատանք կատարող հայ զինծառայողների ուղղությամբ, ապա նաեւ Սոթքի հատվածում: ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնում են՝ հայկական կողմն ունի 4 զոհ եւ 6 վիրավոր: Նշենք, որ մոտ երկու շաբաթ առաջ ադրբեջանական զինուժը խրամատավորվեց Տեղ գյուղի դաշտերում, հարեւանությամբ հայկական կողմը սկսեց ինժեներական աշխատանք կատարել: Պաշտոնական Բաքուն հայտարարում է, թե հայկական ստորաբաժանումներն են կրակ բացել Լաչինի շրջանի իրենց դիրքերի վրա: Ադրբեջանական կողմում էլ զոհեր եւ վիրավորներ կան: Այս լարվածության մասով «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հասկանալ, թե ինչպես է իրավիճակը գնահատել եվրոպական կողմը, քանի որ Հայաստանի սահմանին տեղակայված են ԵՄ դիտորդները: Նրանք պետք է արձանագրեին տեղի ունեցածը: «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանություն խնդրեց Եվրոպական խորհրդարանում Հայաստանի հարցերով մշտական զեկուցող Անդրեյ Կովաչեւից: Նա նշեց, թե Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության հետ ստուգում են սահմանին տիրող իրավիճակի մասին առկա ինֆորմացիան, եւ ներկայացրեց իր դիրքորոշումը՝ կապված իրավիճակի հետ: «Ես շատ ինֆորմացիա չունեմ տեղի ունեցածի վերաբերյալ: Ես հենց նոր հարցում ուղարկեցի պարոն Բորելի գրասենյակում գտնվող Եվրոպական արտաքին գործողությունների ծառայությանը՝ հետաքրքրվելով, թե որտեղ է մեր դիվանագիտական առաքելությունը, որն այնտեղ տեղակայված է փետրվարից: Սակայն հիշեք, որ սա քաղաքացիական առաքելություն է, առանց զենքի են նրանք եւ չեն կարող կրակել», - նշեց նա:

Կովաչեւը նաեւ հավելեց, որ իրենք Ադրբեջանից պահանջում են դադարեցնել ցանկացած գործունեություն եւ ագրեսիա Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ եւ կոչ են անում անհապաղ դադարեցնել ցանկացած կրակոց սահմանին մոտ:

Ռուսական կողմից մեկնաբանություն ստանալ չհաջողվեց «Ժողովուրդ» օրաթերթին:

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը երեկ խորհրդարանում հարց ուղղեց ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: «Տիկին դատախազ, Դուք աշխատել եք ՀՀ վճռաբեկ դատարանում 2007 թվականից: 2008-2009 թվականներին Սասուն Միքայելյանի, Նիկոլ Փաշինյանի եւ «Մարտի 1»-ի գործով անցնող մյուսների վերաբերյալ քրեական գործերի վճիռները կայացվել են մոտավոր հենց այդ ժամանակում: Կխնդրեմ ասել՝ օրինակմն էին այդ դատավճիռները, թե՞ ոչ՝ իբրեւ Վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական եւ օգնական»: Սակայն ՀՀ գլխավոր դատախազը Թագուհի Թովմասյանի այս եւ մյուս հարցերը համարեց հարցի քննարկմանը ոչ վերաբերելի (քննարկվում էր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին հարցը): Նա հայտարարեց, թե, որպես իրավաբան, դատական ակտերը քննարկելու իրավունք չունի: Այսպիսով, գլխավոր դատախազը խուսափեց հստակ պատասխանել՝ այո կամ ոչ: Մինչդեռ եթե հարցին պատասխան տրվեր՝ այո, ապա պարզ կլիներ, որ իսկապես ապօրինություններ են եղել: Բանն այն է, որ դատավորների օգնականները հիմնականում նախագծում են կայացվելիք որոշումների եւ վճիռների նախագծերը, եւ Աննա Վարդապետյանն առնվազն չէր կարող չիմանալ, թե ինչ վճիռներ են կայացվել Վճռաբեկ դատարանի քրեական պալատում, եթե չասենք, որ հենց ինքն է նախագծել «Մարտի 1»-ի գործով վճիռները: Իսկ եթե Աննա Վարդապետյանը պատասխաներ, որ ապօրինություն չկա, ամեն ինչ օրինական է եղել, նշանակում է, որ Նիկոլ Փաշինյանն իսկապես հանցագործություն է իրականացրել, ապօրինի հավաքներ է կազմակերպել, սադրել է եւ չի եղել քաղբանտարկյալ: Այդ դեպքում անհասկանալի է, թե ինչպես է Վարդապետյանը աշխատել որպես Նիկոլ Փաշինյանի օգնական՝ նրան համարելով հանցագործ: Ահա սա էր պատճառը, որ դատախազը խուսափեց ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական պատասխան տալ՝ ասելով, թե կայացված ակտերի մասով կարծիք հայտնելու իրավունք չունի: Բայց, միեւնույնն է, Թագուհի Թովմասյանի կողմից հնչած հարցերին՝ ապօրինի են եղել 2008-ի արյունալի դեպքերի վճիռները, թե ոչ, ՀՀ գլխավոր դատախազը պետք է ի վերջո պատասխանի: Հիշեցնենք, որ «Մարտի 1»-ի գործով կայացված շատ դատավճիռներ կամ արդարացվել են, կամ Եվրադատարանով «կոտրվել»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում կայացած քննարկման ժամանակ քարտուղար Արթուր Հովհաննիսյանին ասվել է, որ ԱԺ երեկվա նիստին նա հրապարակավ պետք է ներողություն խնդրեր ՄԻՊ թեկնածուի հարցի քննարկման ժամանակ իր դրսեւորած՝ պատգամավորին ոչ հարիր վարքի, փողոցային խուլիգանի նման իրեն պահելու համար: Բանն այն է, որ նրա հնչեցրած վիրավորանքներն ու սպառնալիքներն իսկապես մեծ աղմուկ են բարձրացրել թե՛ հանրության, թե՛ իրավապաշտպան տարբեր կառույցների շրջանում: ՔՊ-ականներն իրենք էլ հասկանում են, որ Արթուր Հովհաննիսյանն իսկապես չափն անցել է, ու նրա վարքագիծը մեծ հարված է հասցնում իրենց ստեղծած «ժողովրդավար» կերպարին, ուստի Արթուր Հովհաննիսյանին պարտադրել էին ԱԺ երեկվա նիստին ներողություն խնդրել իր պահվածքի համար: Վերջինս, սակայն, համառորեն դեռեւս հրաժարվում է ներողություն խնդրել: Կանի, թե ոչ, ժամանակը ցույց կտա, բայց նրա շուրջ օղակը սեղմվում է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգն առողջապահության նախկին նախարար, ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի գործունեության մասով շրջանակն ընդլայնում է: Գործը հասնում է Առողջապահության նախարարությանը: Ասել է թե՝ իրավապահները կմտնեն նախարարություն: Նախարար Անահիտ Ավանեսյանի պաշտոնավարման ժամանակաշրջանը եւս համընկնում է չարաշահումների փուլերի հետ: Հիշեցնենք, որ նախաքննական մարմինը՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, կալանավորել է Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանին: Քրեական գործով կալանավորվել են «Մեդլայն» կլինիկայի աշխատակիցներ, հարցաքննվել են «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ տնօրենը, աշխատակիցները, իսկ հիմա հասել են խոշոր ձկներին: Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը: Ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Հիշյալ ծրագրի շրջանակում ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. հրամանով հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության՝ «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը:

«ԴՈՒԽՈՎ» ՍՏՐՈՒԿՆԵՐԸ

ՍՏՐԿԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԱՆԿԱՏ ՉԵՆ ՄՆԱ

Ապրիլի 4-ին ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եվ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում ՄԻՊ թեկնածուի քննարկումը թեժ մթնոլորտում անցավ: Իշխող ֆրակցիայի պատգամավորները քննարկումն իսկական փողոցային կռվի էին վերածել:

«Ժողովուրդ» օրաթերթը ՄԻՊ քննարկման ժամանակ տեղի ունեցած միջադեպի եւ իշխող ֆրակցիայի դրսեւորած վարքի մասին զրուցել է իրավապաշտպան Ավետիք Իշխանյանի հետ:

-Պարոն Իշխանյան, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը անցած շաբաթ քննարկեց ՄԻՊ թեկնածուի առաջադրման հարցը, որի ժամանակ աղմկահարույց միջադեպեր արձանագրվեցին: Տպավորություն էր, որ իշխող ֆրակցիայի պատգամավորները մտադրված եկել էին նիստը տապալելու: Ինչպե՞ս կգնահատեք հանձնաժողովում կատարվածը:

-Այն, որ իշխող ֆրակցիայի պատգամավորները մտադրված էին եկել նիստին, անկասկած է, բայց, իմ կարծիքով, ոչ թե այն տապալելու մտադրությամբ, այլ իրենց ստրկատիրոջ առջեւ մրցելու, թե ով է ավելի հավատարիմ ստրուկ: Թող ներող լինի Էդգար Ղազարյանը, բայց նա հիանալի հնարավորություն տվեց նրանց ինքնացուցադրվելու: Էդգար Ղազարյանն ինձ կհակաճառի, թե այն եւս մեկ հնարավորություն էր՝ պատռելու ՔՊ-ականների դիմակը: Չեմ վիճի, եթե դեռեւս մեր ժողովրդի մեջ կային միամիտներ, թերեւս Էդգար Ղազարյանը հասավ իր նպատակին: Բայց, ամեն դեպքում, կարծում եմ, որ այդ միջադեպից առավել շահած դուրս եկան «դուխով» ստրուկները, որոնց հայհոյախառն սպառնալիքները նրանց ստրկատիրոջ կողմից աննկատ չեն մնա եւ խրախուսանքի կարժանանան: Այդ խրախուսանքը կլինի դրամական, թե այլ, օրինակ՝ պաշտոնի բարձրացման կամ այլ տիպի, ապագայում կերեւա:

-Նիստը տապալելու հիմնական «պարտականությունն» իր վրա վերցրել էր ՔՊ ֆրակցիայի քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, որը վիրավորական արտահայտություններ, անգամ սպառնալիքներ էր հնչեցնում ընդդիմության թեկնածուի՝ Էդգար Ղազարյանի հասցեին: Իրավական ի՞նչ գնահատականի նրա վարքագիծը պետք է արժանանա:

-Իսկ, Ձեր կարծիքով, պատահակա՞ն է արդյոք, որ Ձեր նշած անձը ՔՊ ֆրակցիայի քարտուղարն է: Իր այս պահվածքից հետո շուտով, ամենայն հավանականությամբ, նա իր քաղաքական կարիերայում առաջընթաց կգրանցի: Այսօր խոսել Հայաստանում իրավական հետեւանքների մասին, երբ այն վերաբերում է իշխանական ստրուկներին, անիմաստ է:

-Ինչու՞ գլխավոր դատախազը, որն ընդդիմադիրների դեպքում առանց հապաղելու անձեռնմխելիությունից զրկելու միջնորդագրեր է ներկայացնում ԱԺ-ին, այս դեպքում «լռում է», համենայնդեպս, մինչ այս պահը նրա կողմից որեւէ արձագանք չկա, թեեւ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն այս հարցով դիմում ուղարկել է դատախազություն:

-Ինչպես գլխավոր դատախազուհին, այնպես էլ այլ իրավապահ կոչվող մարմինները գործում են ոչ թե օրենքով, այլ իրենց ստրկատեր՝ վարչապետ կոչեցյալի հրահանգով: Եթե գլխավոր դատախազուհին մասնակցում է վարչապետուհու կազմակերպած միջոցառումներին եւ հաճոյանում նրան, ի՞նչ եք նրանից սպասում: Հիշենք նաեւ՝երբ նա վարչապետ կոչեցյալի օգնականն էր, նույն վարչապետի ցուցումով «օգնում էր» քննիչին մեղադրանք առաջադրելուն: Այնպես որ, միամտություն է սպասել, թե գլխավոր դատախազուհին կարձագանքի եւ այս, եւ ԱԺ խոսնակի խուլիգանական արարքին: Կրկնեմ բազմիցս հնչեցրած միտքս. Հայաստանում իրավական ճանապարհով պայքարն անշնորհակալ, անիմաստ զբաղմունք է: Պայքարը պետք է լինի միայն քաղաքական, բայց նաեւ՝ անպայման վճռական:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՌԱՋԱՐԿ

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԿԵՏԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, որ նաեւ հանդիսանում է «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահը, առաջարկում է եւս մեկ անգամ երկարաձգել այդ հանձնաժողովի գործունեությունը: Համապատասխան նախագիծն արդեն դրվել է շրջանառության մեջ:

Մասնավորապես, նա առաջարկում է գործունեության ժամկետը երկարաձգել եւս վեց ամսով: Որպես հիմնավորում նշվում է. «Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը տարբեր գերատեսչություններից պահանջել եւ ստացել է բազմաքանակ փաստաթղթեր, որոնք մանրամասն ուսումնասիրելուց հետո անցել է հրավիրյալներին լսելու փուլին»:

Նշենք, որ այս հանձնաժողովը ստեղծվել է 2022 թվականի փետրվարի 10-ին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով: Հանձնաժողովի լիազորությունների ժամկետն արդեն մեկ անգամ երկարաձգվել է 2022 թվականի հոկտեմբերի 5-ին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, Ազգային ժողովի որոշմամբ: Այդ օրը՝ քննարկումների ժամանակ, Անդրանիկ Քոչարյանը հայտնել էր, որ մարտ ամսին հանձնաժողովի կողմից մշակվել եւ քննարկումներից հետո մարտի 30-ին Պաշտպանության նախարարության կողմից ներկայացվել է 16 կետից բաղկացած առանցքային փաստաթղթերի ցանկը:

Նշված ցանկի համաձայն՝նախարարությունը շուրջ 2 ամիս ձեւավորել է պահանջվող փաստաթղթերի փաթեթի մի մասը եւ ներկայացրել հանձնաժողովի ուսումնասիրմանը: Այն ներառում է շուրջ 3.500 նմուշի տեքստային եւ գրաֆիկական փաստաթղթեր՝ ընդհանուր 10.000-ից ավելի էջի ծավալով, որը դեռ վերջնական չէ: Եվ հենց այդ պատճառով էին նրանք որոշել կրկին երկարաձգել քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը:

Հավելենք, որ, «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի հոդված 20-ի համաձայն, Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը վեց ամիս է, որը կարող է երկու անգամ հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչեւ վեցական ամսով: Այսինքն՝ սա վերջին անգամ է, որ ժամկետը երկարաձգվում է, եւ այլեւս նման իրավունք չի լինի:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԺԱՄԿԵՏԸ ԿԵՐԿԱՐԱՁԳԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով է հրավիրվելու ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը: Առաջիկայում այս շարքը շարունակվելու է, եւ նոր հրավիրվողներ էլ կլինեն: Բանն այն է, որ քննիչ հանձնաժողովին գործունեության քիչ ժամանակ է մնացել, եւ պետք է արագացնել աշխատանքները: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, որ նաեւ հանդիսանում է «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահը, առաջարկում է եւս մեկ անգամ երկարաձգել այդ հանձնաժողովի գործունեությունը: Համապատասխան նախագիծն արդեն դրվել է շրջանառության մեջ:

Մասնավորապես, նա առաջարկում է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել եւս վեց ամսով: Որպես հիմնավորում՝ նշվում է. «Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը տարբեր գերատեսչություններից պահանջել եւ ստացել է բազմաքանակ փաստաթղթեր, որոնք մանրամասն ուսումնասիրելուց հետո անցել է հրավիրյալներին լսելու փուլին»: Այսինքն՝ վեց ամիս է մնացել հանձնաժողովին գործունեություն ծավալելու եւ վերջնական արդյունքներ արձանագրելու համար: Նրանց իրական նպատակը պատերազմի հնարավոր հանցանքները Նիկոլ Փաշինյանի վրայից մաքրելն է:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՉԼԻՆԻ՝ ԿՏՈՒԳԱՆԵՆ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացրել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս նախագիծը հանրային քննարկման է դրվել ապրիլի 6-ին եւ այս ընթացքում արդեն ստացել է 29 դեմ եւ 1 կողմ ձայներ: Այս նախագծում կատարվելիք փոփոխության դեպքում տանտերը կարող է տուգանվել, եթե առանց պայմանագրի է տալիս անշարժ գույքը վարձակալության: Մասնավորապես, ՊԵԿ-ը որպես հիմնավորում նշում է այն հանգամանքը, որ օրենսգրքի 407-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում, մասնավորապես, քաղաքացիների՝ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելը: Սակայն ՊԵԿ-ը նկատում է՝ գործնականում շատ են լինում դեպքեր, երբ քաղաքացիները հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով գույքը վարձակալությամբ հանձնելիս խուսափում են վարձակալության պայմանագիր կնքելուց եւ պետական գրանցում կատարելուց: Եվ ՊԵԿ-ն առաջարկում է համապատասխան գրանցում չլինելու դեպքում սահմանել պատասխանատվության միջոց՝ տուգանք:

Մասնավորապես, այդ դեպքում գանձվում է տուգանք՝ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով: Հավելենք, որ այս նախագիծը հանրային քննարկման կմնա մինչեւ ապրիլի 21-ը, այնուհետեւ պետք է ուղարկվի կառավարություն, այնտեղ հավանության արժանանա եւ միայն ԱԺ կողմից ընդունվելու դեպքում մտնի ուժի մեջ:

ՄԵԾ ԾԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐ

ՀՀ անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանին «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել՝ խնդրելով պարզաբանել, թե «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի, Իջեւանի, Սեւքարի եւ Արծվաբերդի անտատնտեսություններում 2022թ-ին որքան վառելափայտի եւ որքան շինափայտի հատումներ են կատարվել, այդ անտառտնտեսություններում 2023թ-ին որքան հատումներ են նախատեսվում: Անտառային կոմիտեից ստացված պատասխանում նշված է. «2022թ.-ին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Տավուշի մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում բոլոր հատումներով մթերվել է 16 962 խմ, որից՝ 832 խմ շինափայտ, այդ թվում՝ «Իջեւանի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 82 խմ, «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 2741 խմ, որից շինափայտ՝ 67 խմ, «Սեւքարի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 7826 խմ, որից շինափայտ՝ 391 խմ, «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 6313 խմ, որից շինափայտ՝ 365 խմ: 2023 թվականի մարտի 22-ի դրությամբ նախատեսվում է մթերել «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 244 խմ փայտանյութ, «Սեւքարի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 4937 խմ փայտանյութ, «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղում՝ 5425 խմ փայտանյութ, « Իջեւանի անտառտնտեսություն» մասնաճյուղում ներկայումս վառելափայտի մթերում նախատեսված չէ»:

ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒ

ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

«Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու Անահիտ Մանասյանի լեգիտիմությունը կարող է հարցականի տակ դրվել»,- Ազգ նիստում Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության հարցի քննարկման ժամանակ ասաց ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ընդդիմադիր պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

Նա մանրամասն ներկայացրեց բոլոր այն խախտումները, որոնք թույլ են տվել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները իր ղեկավարած հանձնաժողովի նիստում թեկնածության քննարկման ժամանակ: «Առաջին իսկ րոպեից իշխող մեծամասնության պատգամավորները ագրեսիվություն ցուցաբերեցին, որը քննարկումների ժամանակ միայն ուժեղանում էր»,-ասաց նա:

Ապա նա թվարկեց պատգամավորի էթիկայի բոլոր այն նորմերը, որոնք նախատեսված են օրենքով, եւ որոնք խախտվել են իշխող խմբակցության անդամների կողմից: Թովմասյանը մատնանշեց նաեւ նրանցից շատերի օգտագործած փողոցային հայհոյանքը:

«Նման այլանդակությունը շարունակվեց նաեւ հենց Մանասյանի ներկայությամբ»,- նշեց Թագուհի Թովմասյանը՝ հավելելով, որ նման պայմաններում ճիշտ կլիներ, որ Մանասյանը հետ կանչեր իր թեկնածությունը: Այնուամենայնիվ, Մանասյանը դա չարեց: «Եվ այստեղ միանգամայն արդարացի կարող է բարձրաձայնվել լեգիտիմության հարցը: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն ունի վստահության շատ բարձր աստիճան, եւ ես ցավում եմ, որ նման միջադեպերը կարող են ստվերել այդ ինստիտուտի հեղինակությունը»,-նշեց պատգամավորը:

Նա Մանասյանին հորդորեց կոնկրետ հասցեական գնահատականներ տալ առնվազն այն դեպքերում, երբ սպառնալիքներ ու վիրավորանքներ են հնչում իր ներկայությամբ:

Մարդու իրավունքների նոր պաշտպանի ընտրության քննարկումը խորհրդարանում թեժ մթնոլորտում անցավ:

Իշխանականները խոսում էին իրենց առաջարկած թեկնածուի՝ գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանի առավելություններից, վստահորեն պնդում, որ ճիշտ ընտրություն են կատարել, մինչդեռ ընդդիմադիրները հակադարձում էին՝ համոզիչ չեն Մանասյանի պնդումները, թե լինելու է բոլորի պաշտպանը ու կաշկանդված չի լինելու:

«Սա ինձ համար պաշտոն չէ, այն պատասխանատվություն եւ առաքելություն է, եւ այն ստանձնում եմ շատ մեծ ու բարձր պատասխանատվությամբ: Միանշանակ հանձնառու եմ փորձել, ձգտել ամեն ինչ անել այդ առաքելությունը մինչեւ վերջ հասցնելու եւ այս ոլորտը որեւէ պատշաճ մակարդակի կատարելագործելու նպատակով», - իր խոսքում ասաց թեկնածուն:

34-ամյա Մանասյանն իրավաբան է, գլխավոր դատախազությունում աշխատանքի է անցել ընդամենը չորս ամիս առաջ, նախկինում նաեւ Սահմանադրական դատարանում է աշխատել: Խորհրդարանի ամբիոնից Մանասյանը հավաստիացնում էր, թե ամեն ինչ անելու է ատելության, բռնության մթնոլորտը ցրելու եւ համերաշխության միջավայրում հարցերը լուծելու համար, պաշտպանելու է բոլորի իրավունքները:

«Մանասյանի խոսքերն էլ ավելի ամրապնդեցին իշխանականների տեսակետը, որ ճիշտ մարդու են հանձնում պաշտպանի կառույցը»,- հայտարարեց իշխանականներից Վիգեն Խաչատրյանը: Թեկնածուի կենսագրությունը, ասաց, իրեն վստահություն է ներշնչել, որ պաշտպանի գործը հենց նրա համար է:

«Դատախազությունում աշխատանքի որ ոլորտներն եք համակարգել, որը կրկին անգամ փաստում է, որ Դուք ուղղակի առնչություն ունեք այն բնագավառի հետ, որում պետք է հանդես գաք ապագայում: Գնալով մենք համոզվում ենք, որ շատ լավ թեկնածու ենք ընտրել, հատկապես երբ պատասխանում եք ընդդիմության հարցերին», - ասաց Խաչատրյանը:

Ընդդիմադիրներն ասում էին՝ Մանասյանի մի քանի հայտարարություններ, այդ թվում՝ կոնկրետ հարցերին ընդհանրական գնահատականներ տալը, էլ ավելի հաստատեց իրենց տեսակետը՝ գլխավոր դատախազի տեղակալը չի կարող մարդու իրավունքները պաշտպանել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը ստորագրել է հրամանագիր, որի համաձայն՝ Գրիգորի Արկադիի Գաբրիելյանցը նշանակվել է ԱՀ պետական խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան՝ ազատվելով պետական խորհրդականի պաշտոնից:

Հանդիպում՝ էկոնոմիկայի նախարարությունում

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային համագործակցության հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Էլդար Ալիշերովի հետ, որին մասնակցում էին նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության պետ Արմեն Եգանյանը, Հայաստանի մի շարք բիզնես ասոցիացիաների եւ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային իրավահարաբերությունների կարգավորմանը, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքում նախատեսվող փոփոխություններին, լոգիստիկ ծառայությունների կազմակերպմանը, մուլտիմոդալ բեռնափոխադրումների իրականացմանն առնչվող մի շարք հարցեր:

ԽԱԽՏԵԼ Է ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Քեյթ Միդլթոնը զատկական իր համարձակ մատնահարդարմամբ խախտել է թագավորական ոչ պաշտոնական վարվելակարգը: Անցյալ տարի Եղիսաբեթ 2-րդ թագուհու մահից հետո՝ առաջին Զատիկին, Քեյթ Միդլթոնը ներկայացել էր վառ կարմիր եղունգների լաքով:

Կիրակի օրը՝ Զատիկին, Ուելսի արքայադուստրը հագել էր կապույտ երանգի վերարկու-զգեստ եւ համապատասխան գլխարկ: Քեյթը գարնանային տեսքն ամբողջացրել էր էլ ավելի «համարձակ աքսեսուարով»՝ վառ կարմիր մատնահարդարմամբ: Ինչպես նշում է The Sun-ը, թագավորական վարվելակարգը խստիվ արգելում է թագավորական ընտանիքի անդամներին վառ գույնի լաք կրել, փոխարենը խրախուսում է պաստելային երանգների օգտագործումը պաշտոնական առիթների համար:

Չհաշված մի քանի դեպքեր, Քեյթ Միդլթոնը հետեւում է կանոններին, ուստի էթիկետի այս խախտումն անակնկալ էր: Բայց այս քայլը նաեւ ազդանշան է տալիս, որ ամեն ինչ փոխվում է Չարլզ III թագավորի օրոք, որի թագադրումը տեղի կունենա հաջորդ ամիս:

Նշենք, որ Եղիսաբեթ II թագուհին խստորեն հետեւել է թագավորական արարողակարգին եւ, ըստ տեղեկությունների, նույնն էր ակնկալում նաեւ ընտանիքի բոլոր անդամներից: Թվում է, թե թագավորական ընտանիքը իսկապես թուլացել է նոր թագավորի հետ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՑ 3-Ը ՃՈ ՏԵՍՈՒՉՆԵՐ ԵՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում նախաձեռնված եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ժ. Վ.-ն, Է. Ս.-ն եւ Հ. Մ.-ն, զբաղեցնելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՃՈ Կոտայքի հաշվառման-քննական բաժանմունքի ավագ տեսուչի եւ տեսուչի պաշտոնները, վարորդական վկայական ստանալու համար դիմած անձանց օգտին ակնհայտ աղօրինի գործողություն կատարելու համար Ս. Գ.-ի եւ Ա. Գ.-ի միջնորդությամբ ստացել են տարբեր չափի գումարներ՝ որպես կաշառք:

Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ 5 քաղաքացի, դիմելով Ս. Գ.-ին եւ Ա. Գ.-ին, խնդրել է օժանդակել ՃՈ տեսուչին կաշառք տալու դիմաց ձեւական բնույթ կրող քննություններով վարորդական վկայականներ ստանալու հարցում: Վերջիններս համաձայնել են եւ հիշյալ քաղաքացիներից ստացել են տարբեր չափի գումարներ եւ որպես կաշառք փոխանցել են ոստիկանության աշխատակիցներ Ժ. Վ.-ին, Է. Ս.-ին եւ Հ. Մ.-ին:

Կաշառքի գումարը ստանալուց հետո ոստիկանության աշխատակիցներ Ժ. Վ.-ն, Է. Ս.-ն եւ Հ. Մ.-ն առանց ավտոմեքենա վարելու գործնական գիտելիքները պատշաճ ստուգելու ձեւականորեն ընդունել են գործնական քննություններ եւ դրական գնահատել, ինչի հիման վրա սահմանված կարգի խախտմամբ տրամադրվել են վարորդական իրավունքի վկայականներ:

Քրեական վարույթի շրջանակում ՃՈ տեսուչներ Ժ. Վ.-ն, Է. Ս.-ն եւ Հ. Մ.-ն, միջնորդներ Ս. Գ.-ն եւ Ա. Գ.-ն, ինչպես նաեւ կաշառք տված 5 քաղաքացիները ձերբակալվել են եւ բերվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Վերը նշված հանցավոր արարքների համար ՃՈ աշխատակիցներ Ժ. Վ.-ին, Է. Ս.-ին եւ Հ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /Ժ. Վ.-ին՝ 3 դրվագ/, միջնորդներ Ս. Գ.-ին 46-436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 437-րդ հոդվածի 1-ին մասով /4 դրվագ/, Ա. Գ.-ին՝ 437-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 5 քաղաքացիներին՝ 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող քրեական վարույթով («Գաղտնի» նշագրմամբ) նախաքննությունն ավարտվել է: Վարույթն իրականացնող մարմնի կողմից այդ մասին գրավոր ծանուցվել են վարույթի մասնավոր մասնակիցները:

Վարույթի շրջանակում մեղադրանք է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախկին նախարար Ս.Օ.-ին՝ 4 դրվագ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 3 դրվագ 308-րդ հոդվածի 2-րդ մասով (առանձնապես խոշոր չափերով գույքի վատնում եւ պաշտոնեական լիազորությունների չարաշահում, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախկին նախագահ Մ.Վ.-ին՝ 2 դրվագ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունների չարաշահում, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասի նախկին հրամանատար Գ.Խ.-ին՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (փողերի լվացում, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով եւ պաշտոնեական դիրքն օգտագործելով), «Մոսթոն Ինժիներինգ» ընկերության տնօրեն Դ.Գ.-ին՝ 18.04.2003

թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով (առանձնապես խոշոր չափերով խարդախություն եւ փաստաթղթի կեղծում): Մեղադրանք է ներկայացվել նաեւ 9 անձի:

ԼՈՒՐԵՐ

ՎԻՐԱՎՈՐԵԼ ԵՆ ԴԱՏԱՎՈՐ ՈՐԴՈՒՆ

ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրվել է առերեւույթ հանցանքի մասին հաղորդում:

Նյութեր են ստացվել այն մասին, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդ. Հովհաննիսյանը 2023թ. մարտի 29-ին թիվ ԱՐԴ1/4853/02/21 քաղաքացիական գործով կայացրել է վճիռ, որը դատական իշխանության պաշտոնեական կայքում հրապարակելուց հետո Նաիրի Հոխիկյանը «Facebook» սոցիալական ցանցում գործող իր էջում հրապարակում է կատարել՝ դատավոր Էդ. Հովհաննիսյանի նկատմամբ իր աշխատանքային գործունեության հետ կապված վիրավորական արտահայտություններով:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է ներկայացրել հսկողություն իրականացնող դատախազին Ն.Հ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 489-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

Ն.Հ.-ին ներկայացվել է մեղադրանք:

Էդգար Հովհաննիսյանի հայրը՝ Էդիկ Հովհաննիսյանը, նախկինում աշխատել է ԱԱԾ-ում եւ եղել է Արմավիրի մարզի ԱԱԾ վարչության պետը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԴԻ

Երեւանում ապրիլի 11-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել. ժամը 07:20-ի սահմաններում Երեւանի 1-03 շտապօգնության «Կենտրոն» ենթակայանից Ոստիկանության կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել, որ շտապօգնության 06 խումբը կանչով մեկնել է Աբովյան փողոց-Սայաթ-Նովա պողոտա խաչմերուկ, որտեղ Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու այգում դի են հայտնաբերել:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ՝ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Մինչ դեպքի վայրի զննություն էր կատարում քննչական խումբը, Ոստիկանության կենտրոնական բաժնի ծառայողները պարզել են, որ մահացածը Երեւանի բնակիչ 57-ամյա Ռ. Պ.-ն է:

Քննիչի որոշմամբ՝նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ԴԱՏԱԽԱԶԸ ՃՈՒՏ Է ԵԿԵԼ

Երեկ Ազգային ժողովը վաղ առավոտից քննարկում էր Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության հարցը: Թեկնածուն Անահիտ Մանասյանն էր, ում թեկնածությունը հավանության էր արժանացել Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

Արդեն երկրորդ հարցով խորհրդարանը պետք է քննարկեր գլխավոր դատախազի միջնորդությունը՝ ընդդիմադիր խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում սկսելուն հավանություն տալու համար:

ArmLur.am-ը ֆիքսեց, որ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդարան էր եկել հարցի քննարկումից գրեթե մեկ ժամ շուտ: Բանն այն է, որ Անահիտ Մանասյանն այս պահին գլխավոր դատախազի տեղակալն է, եւ Աննա Վարդապետյանի խորհրդարան գալն ու դահլիճում նստելը պատահական չէ: Ներկա գտնվելով՝ ՔՊ-ականները եւս մեկ անգամ զգաստանում են՝ հասկանալով, որ պետք է գնան եւ ընտրեն Անահիտ Մանասյանին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 43 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔ

Պետական եկամուտների կոմիտեն շինարարության ոլորտի եւ հատուկ հսկողություն պահանջող խոշոր հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրերի շրջանակում 2023թ. առաջին եռամսյակի ընթացքում բացահայտել է աշխատողի չձեւակերպման ու ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման դեպքեր:

Ռիսկերի խորհրդի կողմից ընտրված տնտեսական գործունեության առանձին ոլորտներում գործունեություն ծավալող հարկ վճարողների մոտ իրականացվել է կարգապահական վարքագծի վերլուծություն: Արդյունքում շինարարության ոլորտում գործունեություն իրականացնող 12 հարկ վճարողների մոտ արձանագրվել է աշխատողի չձեւակերպման 12 խախտման դեպք, իսկ հատուկ հսկողություն պահանջող 60 խոշոր հարկ վճարողների մոտ արձանագրվել է աշխատողի չձեւակերպման 10 խախտման դեպք եւ ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման 54 դեպք:

Հիշեցնենք, որ Պետական եկամուտների կոմիտեի հարկային եւ մաքսային կարգապահության բարելավման ռազմավարության ու դրանից բխող միջոցառումների արդյունավետ եւ օպերատիվ իրականացման ապահովումը համակարգվում է Ռիսկերի խորհրդի կողմից:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԵՐ

ՆԳՆ ոստիկանության ՊԾ Երեւանի գնդի 4-րդ գումարտակի ծառայողները ապրիլի 5-ին՝ ժամը 23.25-ին, Մյասնիկյան պողոտայում հայտնաբերել, ապօրինի զենք-զինամթերք պահելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ, «Մազդա» մակնիշի մեքենայով հանդերձ, ոստիկանության Մարաշի բաժանմունք են տեղափոխել 26-ամյա մի երիտասարդի:

Խուզարկությամբ նրա պայուսակում հայտնաբերվել է «Բրաունինգ ԳՊԴԱ» տիպի գազային ատրճանակ՝ լիցքավորված 8 փամփուշտով, ծալովի դանակ՝ ընդհանուր 13 սմ երկարությամբ, իսկ կոշիկի միջից հայտնաբերվել է «Նորթ Ամերիկա 22 Շորտ» գրառմամբ թմբուկավոր ատրճանակ՝ լիցքավորված 5 փամփուշտով:

Մեքենան տեղափոխվել է ոստիկանության Կենտրոնական բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻՆ

Ապրիլի 10-ին լրանում է Ղարաբաղյան առաջին պատերազմի ամենաողբերգական եւ սարսափելի էջերից մեկի՝ Մարաղայի կոտորածի 31-րդ տարելիցը: Այս մասին հայտարարություն է տարածել ԱՀ արտաքին գործերի նախարարությունից:



1992 թվականի ապրիլի 10-ին Ադրբեջանի զինված ուժերը երկար եւ ինտենսիվ հրետակոծությունից հետո ներխուժեցին Արցախի Մարտակերտի շրջանի Մարաղա ավան եւ դաժան կոտորածի ենթարկեցին տեղի խաղաղ բնակչությանը: Ավելի քան 50 անմեղ քաղաքացիներ դաժանաբար սպանվեցին եւ տանջամահ արվեցին, տասնյակ գյուղացիներ, այդ թվում՝ կանայք եւ երեխաներ, գերեվարվեցին, որոնց մի մասը դաժանաբար սպանվեց գերության մեջ, իսկ 19 անձանց ճակատագիրը մինչեւ այսօր մնում է անհայտ: Այդ հրեշավոր դեպքերից երկու շաբաթ անց բնակավայրը կրկին ենթարկվեց հարձակման, եւ իրենց հարազատներին հուղարկավորելու վերադարձած բնակիչները դարձան Ադրբեջանի զինված ուժերի նոր վայրագությունների զոհը:

Մարաղայի կոտորածը Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի եւ ադրբեջանական ԽՍՀ այլ բնակավայրերի, ինչպես նաեւ Հյուսիսային Արցախի հայ բնակչության դեմ իրականացված ջարդերի ու տեղահանությունների շարունակությունն էր, որի նպատակն էր սաղմի մեջ խեղդել արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացման օրինական պահանջը, ինչպես նաեւ էթնիկ զտման եւ բռնի տեղահանության միջոցով արցախահայությանը զրկել հայրենիքից:

Չնայած այն հանգամանքին, որ Մարաղայում կատարված վայրագությունները մանրամասնորեն փաստագրվել են միջազգային հանրության, այդ թվում՝ Human Rights Watch եւ Amnesty International իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, համապատասխան միջազգային կառույցների կողմից այս հանցագործության պատշաճ քաղաքական գնահատականի բացակայությունը եւ անպատժելիությունը պարարտ հող նախապատրաստեցին Ադրբեջանի հետագա ագրեսիայի, նրա ղեկավարության վարած հայատյաց եւ ցեղասպան քաղաքականության շարունակման եւ ամրապնդման համար: Արդյունքում վստահ լինելով իր անպատժելիության մեջ՝ հետագայում Ադրբեջանն Արցախի Հանրապետության դեմ սանձազերծեց եւս երկու լայնամասշտաբ պատերազմ 2016 թվականի ապրիլին եւ 2020 թվականի սեպտեմբերին՝ արցախահայության դեմ իրականացնելով նոր վայրագություններ եւ ռազմական հանցագործություններ, մարդու իրավունքների ու միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներ, ինչպես նաեւ օկուպացնելով Արցախի Հանրապետության նոր, ավելի ընդարձակ տարածքներ:

Այսօր էլ, անտեսելով Արցախի շրջափակումն անհապաղ դադարեցնելու վերաբերյալ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումը, Ադրբեջանը շարունակում է քաղաքակիրթ մարդկության աչքի առջեւ իրականացնել իր հանցավոր եւ ցեղասպան քաղաքականությունը՝ 120 օր շարունակ Արցախի բնակչությանը պահելով ապօրինի շրջափակման մեջ, զրկելով տարրական կենսապայմաններից, ստեղծելով հումանիտար ճգնաժամ, ինչպես նաեւ ահաբեկչական գործողություններով հետամուտ լինելով Արցախի հայաթափման իր հանցավոր ծրագրի իրականացմանը:

Կրկին կոչ ենք անում միջազգային բոլոր դերակատարներին Ադրբեջանի իշխանությունների ոճրագործությունները դադարեցնելու եւ դրանց լուռ ականատեսը կամ նույնիսկ հանցակիցը չդառնալու համար գործնական ու արդյունավետ գործողություններով Ադրբեջանին բերել իրավական եւ կառուցողական դաշտ՝ հարկադրելով վերջինիս ավտորիտար ղեկավարությանը հարգել միջազգային իրավունքն ու իրենց ստանձնած պարտավորությունները:

ՄԱՐՔ

ՀԱՐԿ՝ ՉՄՇԱԿՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքում շուրջ երեք տասնամյակ գյուղատնտեսության նշանակության հողերի մի մասը հայ-ադրբեջանական սահմանին մոտ լինելու, հակառակորդի նշանառության թիրախում գտնվելու, ականապատ լինելու պատճառով չի մշակվում:

Նոյեմբերյանի համայնքապետարանը սահմանամերձ 8 բնակավայրի հողի եւ այլ անշարժ գույքի հարկ չի հավաքագրում: Կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի 1444-Ն որոշումով՝ վերոհիշյալ բնակավայրերի բնակիչներին պատկանող բնակելի կառուցապատման հողամասերի, վարելահողերի, բազմամյա՝ խաղողի տնկարքների եւ այլ հողերի, նաեւ անշարժ գույքի՝ բնակարանների, ավտոտնակների, այգետնակների եւ այլնի հարկերը պետական բյուջեից փոխհատուցվում են: Նոյեմբերյան համայնքի ավագանին 2023թ. մարտի 17-ի նիստում հաստատել է մարտական գործողությունների հետեւանքով Նոյեմբերյան, Բարեկամավան, Բերդավան, Բաղանիս, Դովեղ, Կողբ, Կոթի, Ոսկեվան բնակավայրերի չմշակվող հողատարածքների հողի սեփականատերերի ցուցակը: Ըստ հաստատված ցանկի՝ 2023 թվականին ՀՀ պետական բյուջեից Նոյեմբերյան համայնքի բյուջե պետք է փոխանցվի 20 միլիոն 227 հազար դրամ: 2023 թվականի համար այդ չմշակվող հողերի համար հաշվարկված հարկը Նոյեմբերյան քաղաքում կազմում է 4 միլիոն 708 հազար 892 դրամ, Բարեկամավանում՝ 120 հազար 660 դրամ, Բերդավանում՝ 5 միլիոն 248 հազար 941 դրամ, Բաղանիսում՝ 486 հազար 592 դրամ, Դովեղում՝ 1 միլիոն 61 հազար 705 դրամ, Կողբում իրավաբանական անձանց համար՝ 50 հազար 649 դրամ, ֆիզիկական անձանց համար՝ 4 միլիոն 681 հազար 306 դրամ, Կոթիում՝ 2 միլիոն 662 հազար 105 դրամ, Ոսկեվանում՝ 1 միլիոն 206 հազար 199 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՃԱՌՔ

Հայաստանի անշարժ գույքի շուկայում այս տարվա փետրվարին իրականացվել է 3606 առքուվաճառքի գործարք, մինչդեռ նախորդ տարվա պետրվարին այդ ցուցանիշը կազմել է 3930: Այս տարվա հունվարին կատարվել է 3021 գործարք:

Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ամենաշատ գործարքները՝ 1057, կատարվել են Երեւանում, որը կազմում է ընդհանուրը 29,3 տոկոսը:

Անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների մոտ 45 տոկոսը հողի գործարքներն են, 28,8 տոկոսը՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների գործարքները, 15,2 տոկոսը՝տների, 5,4 տոկոսը՝ ավտոտնակների գործարքները:

Փետրվարին օտարերկրացիները Հայաստանում անշարժ գույք գնելու 158 գործարք են կատարել: Դրանցից 116 գործարք կատարվել է Ռուսաստանի, 19-ը՝ եվրոպական երկրների, 7-ական՝ ԱՄՆ-ի եւ ԱՊՀ երկրների (բացառությամբ Ռուսաստանի Դաշնության), 3-ը՝ Իրանի քաղաքացիների կողմից:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված անշարժ գույքի գնման 158 գործարքներից 83-ը եղել են բազմաբնակարան շենքերի բնակարանների, 24-ը՝ բնակելի տների: Ամենաշատը օտարերկրացիները անշարժ գույք են գնել Երեւանում (99 գործարք), ամենաքիչը՝ Սյունիքի մարզում (1 գործարք):

Միաժամանակ, հաշվետու ամսում օտարերկրյա քաղաքացիները Հայաստանում իրականացրել են անշարժ գույքի վաճառքի 243 գործարք: Այսպես, ՌԴ քաղաքացիների կողմից իրականացվել է 178 գործարք, ԱՄՆ-ի՝ 19, ԱՊՀ երկրների (առանց Ռուսաստանի Դաշնության)՝ 18, եվրոպական երկրների՝ 16, Իրանի՝ 4, իսկ այլ պետությունների քաղաքացիների՝ 8 գործարք:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից անշարժ գույքի առուվաճառքի 243 գործարքներից 104-ը կատարվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայում, 73-ը՝ հողի շուկայում, 54-ը՝բնակելի տների, 9-ը՝ավտոտնակի շուկայում:

Ամենից շատ օտարերկրյա քաղաքացիները անշարժ գույք են վաճառել Երեւանում (82 գործարք), ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզում (2 գործարք):

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Սլովակիայի Հանրապետությունը 2023-2024 ուսումնական տարվա համար Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել համալսարանական մեկ կրթաթոշակ՝ բակալավրիատի եւ մագիստրատուրայի համար:

ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողների համար համալսարանական ուսուցման ուղղություններն են՝

- ուսուցիչների վերապատրաստում եւ կրթություն,
- տնտեսագիտություն եւ կառավարում,
- էկոլոգիական եւ բնապահպանական գիտություններ,
- կենսատեխնոլոգիա, գյուղատնտեսություն եւ լանդշաֆտ,
- փայտի գիտություն եւ տեխնոլոգիա,
- անտառային տնտեսություն (բացի անտառային էկոհամակարգային ծառայություններից),
- անասնաբուժական բժշկություն,
- ընդհանուր բժշկություն (բացառությամբ բժշկական կենսաֆիզիկայի, բժշկական, կլինիկական եւ դեղագործական կենսաքիմիայի, բժշկական նյարդաբանության),
- ստոմատոլոգիա,
- դեղագիտություն,
- առողջապահական գիտություններ (բացառությամբ ատամնաբուժական հիգիենայի,
ֆիզիոլոգիական եւ կլինիկական սնուցման, ֆիզիոթերապիայի, ճառագայթային տեխնոլոգիայի, ատամնաբուժական տեխնիկայի),
- հանրային առողջություն,
- մեքենաշինություն,
- քաղաքացիական ճարտարագիտություն,
- համակարգչային գիտություն,
- կիբեռնետիկա,
- էլեկտրատեխնիկա եւ էլեկտրոնիկա,
- քիմիական ճարտարագիտություն եւ տեխնոլոգիա,
- սննդի տեխնոլոգիա,
- տրանսպորտ (բացառությամբ տրանսպորտային ծառայությունների, փոստային
ծառայությունների, լոգիստիկայի),
- երկրի ռեսուրսների արդյունահանում եւ վերամշակում,
- ճարտարապետություն եւ քաղաքաշինություն:

Ուսանողները կրթաթոշակ ստանալու համար էլեկտրոնային եղանակով կարող են դիմել 2023 թվականի մարտի 24-ից մինչեւ մայիսի 30-ը www.vladnestipendia.sk կայքի միջոցով, որտեղ առկա է նաեւ ձեռնարկ՝բոլոր անհրաժեշտ տեղեկություններով: Տեխնիկական աջակցություն ստանալու համար թեկնածուները կարող են կապ հաստատել հետեւյալ էլեկտրոնային հասցեի՝ helpdesk@studyabroad.sk եւ +421 907 551 404 հեռախոսահամարի միջոցով:

Պետական կրթաթոշակ ստանալու նախապայմանը սլովակերենի իմացությունն է: Դիմորդները հնարավորություն ունեն լեզվի անվճար մասնագիտական ուսուցում անցնել Բրատիսլավայում 2023 թվականի սեպտեմբերի 4-ից մինչեւ 2024 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում:

Ընտրված թեկնածուները պարտավոր են ներկայացնել պահանջվող փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ԱԳՆ կամ ԿԳՄՍՆ-ի կողմից առաջադրման պաշտոնական նամակը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԳԵԼՔՆԵՐ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓՈՂՆԵՐԻՆ

Ժամկետային ծառայությունից խուսափողների համար օրենսդրությունում կկատարվեն փոփոխություններ, կկիրառվեն մի շարք միջոցներ. լրագրողներին ասել է Պետդումայի պաշտպանության կոմիտեի ղեկավար Անդրեյ Կարտապոլովը: Օրենսդրության փոփոխությունները Պետդուման կքննարկի ապրիլի 11-ին:

«Ծառայությունից խուսափողների համար կնախատեսվեն մի շարք ապահովիչ միջոցներ: Եթե մարդը ծանուցագիրը չի ստանում կամ ձեւացնում է, թե չի ստանում, նրան կպարտավորեցվի հաջորդ զորակոչի ժամանակ երկու շաբաթվա ընթացքում ինքնակամ ներկայանալ զինկոմիսարիատ: Եթե դա չարվի, ապա նրան զինկոմի թվային ստորագրությամբ ծանուցագիր կուղարկվի այն մասին, որ նրա հանդեպ ելքի սահմանափակումներ են մտցվում, կհաջորդեն այլ սահմանափակիչ միջոցներ»,- ասել է պատգամավորը:

Կարտապոլովն ավելացրել է, որ եթե զինակոչիկը նորից չներկայանա, ապա 20 օր հետո այդ զինապարտը կարող է զրկվել տրանսպորտ վարելու, անշարժ գույքի վերաբերյալ պայմանագիր կնքելու, վարկեր վերցնելու եւ այլ հնարավորություններից:

Այս դրույթները նախատեսված են օրինագծի լրացումներով, որը Դումա էր մտցվել դեռ 2018թ. սկզբին: Դրանով առաջարկվում էին փոփոխություններ զինակոչիկի ժամկետային ծառայության համար զինկոմիսարիատ ներկայանալու շրջանակում, մասնավորապես՝ թույլ տալ ծանուցագիրը հանձնել պատվիրված նամակով՝ այն հասցեով, որը նշված է զինվորական հաշվառման փաստաթղթերում, կամ աշխատավայրի, ուսման վայրի հասցեներով:

Օրինագիծն անցել է առաջին ընթերցումը 2018թ., իսկ երկրորդը՝ 2022թ. փետրվարին: Երրորդ ընթերցումը նախատեսվում էր անցած տարվա մարտին, բայց որոշել են հետաձգել այն եւ փաստաթուղթը վերադարձնել երկրորդ ընթերցման:

Երկրորդ ընթերցմամբ փոփոխությունները, որոնք դիտարկվելու են ապրիլի 11-ին, ենթադրում են Զինվորական հաշվառման միասնական ռեեստրի ստեղծում՝ պետական տեղեկատվական ռեսուրսի հիման վրա: «Դրանք նաեւ նախատեսում են, որ, թղթով ծանուցագրից եւ գործատուի միջոցով հանձնվող ծանուցագրից բացի, կմտցվի ծանուցում պատվիրված նամակով եւ էլեկտրոնային ձեւով: Դրանք բոլորը կունենան նույն իրավաբանական ուժը»,- նշել է Կարտապոլովը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԿԱՆՑԿԱՑՎԻ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ

Արհեստական ինտելեկտի դատմության մեջ առաջին նորաձեւության շաբաթը տեղի կունենա ապրիլի 20-ին եւ 21-ին, որի ընթացքում կներկայացվի նորաձեւության եւ տեխնոլոգիայի արտասովոր միաձուլումը: Այս միջոցառումը թույլ կտա նորաձեւության սիրահարներին ականատես լինել արհեստական ինտելեկտի օգտագործմամբ նորաձեւության վերջին զարգացումներին: ԱԻ-ի կողմից ստեղծված դիզայնն այս տարի բուռն թեմա էր: Համացանցը հեղեղված էր հագուստի, կոշիկի եւ աքսեսուարների կրեատիվ ձեւավորումներով: Դիզայներները վերամշակավորում են իրենց սիրելի ապրանքանիշերը եւ ստեղծում նոր նմուշներ, որոնք հաճախ գերազանցում են օրիգինալ դիզայնին կամ ստեղծում են յուրահատուկ գաղափարներ: AI Fashion Week-ը կներկայացնի արհեստական ինտելեկտի կողմից ստեղծված ամենաժամանակակից հավաքածուները:

Միջոցառմանը կարող են մասնակցել բոլոր թվային դիզայներները: Սկսնակ դիզայներները մինչեւ ապրիլի 15-ը պետք է գրանցվեն հատուկ ինտերնետային էջում: AI Fashion Week-ի նպատակն է բացահայտել եւ կրթել նորաձեւության ապագա աստղերին: Հագուստի մանրածախ՝ Revolve Group-ի հետ համագործակցությամբ հագուստ կարտադրվի լավագույն երեք դիզայնի հիման վրա: Միջոցառումը նպատակ ունի նաեւ բարձրացնել իրազեկությունը նորաձեւության ոլորտում արհեստական ինտելեկտի հնարավորությունների մասին եւ դրա օգնությամբ ստեղծել նոր շուկա: Օրինակ՝ նիգերիական ծագում ունեցող ամերիկացի նկարիչ Վալե Օյերինդեն իր առավելություններից է համարում նորաձեւության ոլորտում «ճիշտ տեղեկատվությամբ ճիշտ արդյունքներ ստանալը»: «Սրանք խոսքեր են, որոնք այս մասնագիտությունից հեռու մարդիկ գուցե չիմանան. որքան ավելի շատ փորձ եւ գիտելիքներ ունես այս ոլորտում, այնքան ավելի լավ արդյունքներ կլինեն»,- գրում է Vogue-ը:

McKinsey խորհրդատվական ընկերությունը կանխատեսում է, որ գեներատիվ արհեստական ինտելեկտն առաջիկա 3-5 տարիների ընթացքում կարող է 150-275 միլիարդ դոլար ավելացնել նորաձեւության եւ շքեղության ոլորտներին: Մարտին, Metaverse Fashion Week-ի շրջանակում, Tommy Hilfiger-ը եւ DressX-ը կազմակերպել էին արհեստական ինտելեկտի դիզայնի մրցույթ: Արդյունաբերությունը դեռեւս կողքից է հետեւում առաջին AIFW-ին: AI-ի առաջին նորաձեւության շաբաթը գրավեց նորաձեւության բավական հետաքրքիր ներկայացուցիչների՝ ներառյալ շատերին, որոնք դեռեւս ամբողջությամբ նորաձեւության մեջ չեն: Ստեղծագործողների մոտ 60%-ն իրենց արտադրանքը ստեղծելու համար օգտագործել է Midjourney արհեստական ինտելեկտի հարթակը: Միջոցառումը տեղի կունենա առցանց եւ օֆլայն, հանրությունը կկարողանա քվեարկել հավաքածուների օգտին: Եզրափակիչ անցած լավագույն 10 մասնակիցներն այնուհետեւ կգնահատվեն ոլորտի հայտնի ինսայդերներից կազմված ժյուրիի կողմից, իսկ երեք հաղթողները կստանան աջակցություն AIFW-ից՝ Revolve-ի հետ համագործակցությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԱԿԲԱ» ԲԱՆԿ-ԻՑ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 27-ին՝ ժամը 15:00-ին, սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» վայրում: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին եւ քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով իրական ժամանակի ռեժիմում:

Ընդհանուր ժողովին մասնակցելու եւ տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան «Ակբա» բանկի բոլոր այն բաժնետերերը (անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից), որոնք 2023 թվականի ապրիլի 11-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն բանկի բաժնետերերի ռեեստրում:

Շահութաբաժինների չափի եւ վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից:

Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը եւ անհրաժեշտ տեղեկատվությունը «Ակբա» բանկի բոլոր բաժնետերերին կուղարկվի ապրիլի 12-ին էլեկտրոնային փոստի միջոցով:

ԼՈՒՐԵՐ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Մատրիցա»-ի աստղ Կիանու Ռիվզը նախատեսում է ամուսնության առաջարկություն անել իր սիրելիին՝ Ալեքսանդրա Գրանտին:

Կիանու Ռիվզը եւ Ալեքսանդրա Գրանտը բավական երկար ժամանակ միասին են. նրանք փակ են պահել իրենց հարաբերությունները: Հանգստյան օրերին Կիանու Ռիվզը մեծ խնջույք է կազմակերպել Ալեքսանդրայի համար, որի համար ծախսեր չի խնայել: Դերասանը խնջույքին հրավիրել է ընկերներին եւ ընտանիքի անդամներին, իսկ մտերիմները խոսել են նրանց հարաբերությունների մասին:

«Նրանք երկուսն էլ խելահեղ մի քանի շաբաթ են անցկացրել, եւ դա հիասքանչ էր: Ընկերները հույս ունեին, որ նա երեկույթին ամուսնության առաջարկություն կանի»,- պատմել է հյուրերից մեկը:

Նրանց հարաբերությունների մասին հայտնի դարձավ 2019 թվականին, սակայն նրանք միասին էին շատ ավելի վաղ:

«Կիանուի հարաբերություններն Ալեքսանդրայի հետ ամուր են, նրանք հարգում եւ հիանում են միմյանցով: Նրանք շատ առումներով են նման, կիսում են միեւնույն հետաքրքրությունները»,-նկատել են ինսայդերները: «Կիանուն երկար տարիներ ապրել է բավական միայնակ կյանքով, ուստի ընկերները ուրախ են, որ նա զուգընկեր է գտել»:

«Նա արդեն պատրաստել է մատանին եւ առաջարկի ելույթը, բայց նա նաեւ անհանգստանում է, որ հանկարծ աչքով չտան այն ամենին, ինչն արդեն իսկ կատարյալ է»:

ԿՀԵՌԱՆԱ «ԼԻՎԵՐՊՈՒԼԻՑ»

Անգլիայի փոխչեմպիոն «Լիվերպուլի» 31-ամյա բրազիլացի հարձակվող Ռոբերտո Ֆիրմինոն հաստատել է, որ ամռանը կհեռանա գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմից. հաղորդում է ESPN-ը: Նրա պայմանագիրը լիվերպուլյան ակումբի հետ կավարտվի հունիսին եւ կստանա ազատ գործակալի կարգավիճակ:

«Ես շատ եմ աղոթել, որպեսզի Աստված պահապան լինի ինձ եւ օգնի հեռանալու այս գործընթացում: Ես մինչեւ վերջին խաղը կանեմ հնարավոր առավելագույնը «Լիվերպուլի» համար»,- ասել է Ֆիրմինոն:

Դեռ հայտնի չէ, թե որ ակումբում է շարունակելու կարիերան Ֆիրմինոն, որը 2015 թվականից է հանդես գալիս «Լիվերպուլում», դարձել է Անգլիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր: Ընթացիկ մրցաշրջանում նա մասնակցել է 32 հանդիպման, խփել է 11 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում:

● *Ապրիլի 12-ից 16-ը «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Բենքսի» ցուցահանդեսը: Տոմսերի արժեքը՝3000, 3500 դրամ: Սկիզբը՝ժամը 10:00-ից 21:00-ն:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ է հողամասի կառուցապատման իրավունքը:

Լարիսա Մկրտումյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որքան ժամանակ է վարկային տեղեկատվությունը պահպանվում տվյալների բազայում:

Սվետա Առաքելյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Առաքելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն:

Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն (բանկը կամ այլ վարկային կազմակերպություն) ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ապրիլի 11-ին Երեւանի ավագանին արտահերթի նիստ էր հրավիրել, որի օրակարգում միայն Երեւանի քաղաքապետի ընտրության հարցն էր, սակայն ավագանու անդամները չեն ներկայացել նիստին եւ դրա մեկնարկին Երեւանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար Լեւոն Հովհաննիսյանը նիստերի դահլիճում մենակ էր, քվորում չէր ապահովվել, եւ նիստը համարվեց չկայացած:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 6 +11 + 15
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 + 11 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 7 + 9 +15 +17
Գեղարքունիք	+ 2 + 5 +12 + 15
Լոռի	+ 2 + 6 +11 + 14
Տավուշ	+ 5 + 9 +12 + 16
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 +10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9 +15 + 19

Արարատ	+ 8 + 11 +20 + 23
Արմավիր	+ 7 + 9 +20 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 5 + 12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10 +20 + 23
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +24 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 9 +17 + 20
Արցախ	+ 8 + 11 +22 + 25
Երեւան	+ 8 + 10 +18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*